Հրամանատարն բաւական ատեն մեզ զննելէն զկնի սարսափելի խնդալ մը փրցուց, յետոյ "օտարականներ" ըսաւ, "խնդրեմ պատմեցէք թէ ի՛նչպէս հոս եկաք"։

Նաւուն կորուստն և մեր ազատումը համառօտաբար իրեն պատմելէս ետև "ձեզ տեսնելով այնքան զարմացանք" ըսի "ինչպէս որ դուք մեզ տեսնալով"։ "Այո՛ պարոններ" ըսաւ ինքը, "և եթէ մեր ձեզի հետ ունեցած գործը լմննայ ալ աւելի պիտի զարմանաք, կարծեմ մեզի հետ գալ պիտի հաճիք"։ Աս ըսելով նաւաստիներուն հրամայեց թիերն քաշել։

Կղզոյն թերակղզեաց մէկուն չուրջն նաւարկելէն ետև ցամաքը ելանք ու զարմացանք շատ մը խրճիթներ գտնելով։

Ծովեզերքն ուրիշ 6 հոգի մեզ դիմաւորեցին որոնց մեր պատմութիւնը ընելէն ետև իրենց ինչպէս այս կղզին իյնալն հարցուցինք։ "Կարծեմ վնաս չունի" ըսաւ մակոյկէն մեր հետն առաջ խօսողը "եթէ ձեզի մեր պատմութիւնը ընեմ։ Մենք որոշ պաշտօն մը չունինք, ոչ աղէկ ոչ ալ դէշ ենք, բանի մը կարօտ եղած ատեններս առատութեամբ ունեցողներէն կառնենք, մարդ չենք սպաններ բայց անձնական պաշտպանութեան համար, աս պարոնը—քովս կայնողներէն մէկը



ցոյց տալով–իմ փոխանորդս է։ Արդ, օտար պարոններ, կարծեմ ուրիշ ընտրութիւն չէք կրնար ընել այլ միայն մեզի հետևիլ։ Քանզի կամ մեր գերիներն և կամ մեր ընկերներն պիտի ըլլաք։ Նաև մեր ինչպէս հոս գալուն վրայ կրցածնուդ չափ քիչ խօսեցէք։ Ի՞նչ կըսէք, ետևնուս կուզէ՞ք գալ"։

Ի՞նչ կրնայինք ընել, ճարտարապետն զիս մէկ կողմ առնելով "Տէր իմ" ըսաւ, "ինծի կերեւայ թէ պէտք է հնազանդինք, անշուշտ օր մը փախչելու առիթ մը ձեռք կձգենք"։

"Ինչպէս կրնանք փախչիլ" ըսի, "քանի որ հոս այս մակոյկներէն զատ նաւ չկայ"։

"Ուրեմն ձեր աչքերն աս ծառերուն մէջէն երևցած նաւու մը կայմերն չեն տեսներ" ըսաւ ճարտարապետն, "ո՞վ գիտէ թէ օր մը այն նաւն մեր անձերն ազատելու միջոց չըլլայ"։

Բայց է մ'անգամ այս աւազակաց հետ ընկերանալ չէր ուզեր, ուստի իրենց հրամանատարին աղաչեցի որ արտօնութիւն տայ իմ մարդոցս հետ առանձին խորհրդակցելու։

"Բարի" ըսաւ ինքը, "սակայն երդում կընեմ որ եթէ հետևրնիս խարդախութեան փորձ մը ընէք, ամենքդ ալ կապկապ փոշիի մը միջոցով յաւիտենական հանգիստն կղրկեմ"։

Ճարտարապետին գաղափարն ընկերացս յայտնելով ամենքն ալ հնազանդիլ որոշեցին, ուստի

հրամանատարին իրենց հետ միանալ ուզելնին հաղորդեցի :

Սպառնալիքներն նորոգելէն ետև մեզ խրճիթ մը տանելով առատ ընթրիք մը տուաւ :

Արմաւենեաց հովանոյն տակ 8 խրճիթներ էին շինուած . կղզոյն ներքին մասերն խիստ պտղաբեր ըլլալով պանան , մանկօի պտուղներ , նարինջ եւայլն առատապէս կգտնուէր : Միւս խրճիթներէն քիչ մը հեռու հրամանատարին տունը շինուած էր որուն մէջ զէնքերու առատ գանձ մը կար : Խրճիթներուն մէկ քանին մեր բնակութեանը յատկացան որոնք իրենց հետ ընտանի ըլլալնէս ետև պէտք էր նորոգէինք :

Քիչ ժամանակէն մեր ընկերներուն հետ մտերմանալով իրենց առաջի կենացը վրայ տեղեկացանք : Հրամանատարն և իր փոխանորդն և միւս 9 հոգիներն վաճառականի մը նաւին մարդիկն էին որ Աւստրալիոյ Սիտնի քաղաքէն դէպ ի Չինաստան ճամբայ էին ելած : Քանի մը օր ճամբորդելէն ետև սոքա նաւապետն իրենց հետ խիստ գազանաբարոյաբար վարուելուն պատճառաւ կողմնակիցներովն մէկտեղ ըմպաններ և փորձեր էին հարաւային Ովկիանոսի կղզիներէն մէկը երթալ : Փոթորիկն զիրենք այս կղզին էր մղեր , ուր Ֆիջի կղզիներէն Սիտնի ուսեալք տանող նաւի մը պատահելով մէջի



5 հոգին իրենց նաւն բերեր են և անոնց նաւն ընկղմեցնելէն զկնի այս կղզին հասեր և անկեց անցնող նաւերն կողոպտել սկսեր են : Նաև տեղերնին չիմացուելու նպատակաւ մարդիկը սպաններ են : Ասոնց չորսը իրենց այժմեան արհեստին վրայ խիստ գոհ էին , իսկ հինգերորդն —Փալմեր—կցանկար այս չարագործներուն ձեռքէն ազատիլ :

Նաւը երկու անգամ ճամբորդութիւն ընելով 13 օր բացակայութենէ ետև հետը բաւական աւար բերաւ : Երկրորդ անգամ Ֆիջի կղզիէն երեք կին բերին որոնք աւազակաց երեքն կնութեան առին : Այսպիսի արշաւանաց առնեն մեզ հետ առնելու դեռ չէին վստահէր բարեբաղդաբար : Արդէն 6 ամիս անցաւ առանց մեր ազատութեան ժամն երևնալու : Փալմեր , որ իր աւազակաց մէջ անցուցած կենացը վրայ շատ զժգոհ էր , հետս խիստ մտերմացաւ : Հրամանատարին և իր տեղապահին վստահութիւնն և հաճութիւնն առ զիս քաշեցի իրենց որոշումներուն յարմարելով , այնպէս որ երրորդ հրամանատար անուանեցայ և հետևեալ անգամ քննելիք արշաւանաց զիս հետ առնել խոստացան սակայն միշտ կհսկէին և երբ իրարու հետ երկար խօսակցէինք մեզ մէկզմէկէ կզատէին : Նաւուն վրայ ամէն գիշեր երկու հոգի

հիւսկէն ։ Փախուստի մը փորձն ընելէն միտքս դնելէս ետեւ այնպէս պատահեցաւ որ ես ու Փալմեր նոյն գիշերն նաւուն պահպանութիւն ընելու էինք ։ Խօսակցութիւնը վարպետութեամբ իր առջի կենացը վրայ ուղղեցի ։ Խոստովանե-ցաւ թէ կուզէ փախչիլ սակայն չէր գիտեր թէ ի՞նչպէս ։

« Մեր հետը կմիաբանի՞ս » ըսի « եթէ փախ-չելու փորձն ընենք » ։

« Այո՛ » ըսաւ Փալմեր ։

« Այսպիսի պատեհութիւն մը գուցէ ալ ձեռք չձգենք, հովն ալ արեւելեան կփչէ եթէ այս գիշեր ճամբայ ելլենք չիմացուիր, ուտելիք կը-գտնուի՞ նաւին մէջ » ։

« Երեք օր առաջ նաւը առատ պաշար բեր-ուեցաւ » ։

Արդ կամաց մը խրճիթն երթալով ճարտա-րապետն արթնցուցի եւ ըսի որ մեր մարդոց ե-րեքն՝ որք զատ խրճիթի մէջ կքնանային ար-թնցնէ ։ Իսկ ես միւս երկուքը՝ որք երկու ա-ւազակաց հետ կքնանային արթնցնել գացի ։

Դրանն մօտ պառկողն մերիններէն կարծե-լով կամաց մը շարժեցի ։ Ան ալ ասդին դա-ցաւ եւ հառաչելով « ով է ան, պօռաց, իմ կարգս չէ աս գիշեր » ։

Արթնցողն աւազակաց մէկն էր եւ կարծեց



թէ նաւին վրայ հսկելու համար զինքը արթն-ցնել կուզէի ։

Սխալմանս վրայ զարհուրելով ձայն չհանեցի ու պատին քով կանգնեցայ ։ Երկրորդ փորձս յաջողեցաւ, ճիշդ ուզած մարդս արթնցաւ. ա-կանջն ի վայր ըսի որ միւս ընկերն ալ արթնցնէ ։ Այն ալ ելաւ եւ սկսաւ խօսիլ, սակայն հրա-մայեցի որ կենացը սիրոյն համար լռէ ։ Կամաց կամաց քալելով դուրս ելան. հոն ճարտարա-պետն եւ միւս երեք ընկերներն գտնելով զա-ղափարս նոցա յայտնեցի ։ Մէջերնուս մէկը չու-զեց հետերնիս գալ. մենք ալ մեր ապահովու-թեանը համար զանի գօտիով լաւ մը կապե-ցինք. ժամանակ չկորսնցնելով աւազակաց ունեցած միակ մակոյկը ջուրը իջեցուցինք եւ մէջը մտնելով նաւն հասանք ։ Կացին մը գտնե-լով նաւին չուանը կտրեցինք, մակոյկն ալ ըն-կղմելով սկսանք նաւել. Փալմեր ծովու տեղեակ ըլլալով ղեկավար եղաւ եւ այսպէս յառաջ գա-ցինք ։ Կապած ընկերնիս սկսաւ աղաղակել, աւազակներն բանն իմացան եւ կղզոյն ծայրը վազեցին որուն առջեւէն քարնկեցի հեռաւորու-թեամբ պիտի անցնէինք ։

Մակոյկն չգտնելով սպառնացին որ մօտենանք եւ վրանիս հրացան պարպեն ։ Փալմերին ըսի որ նշան առածիս պէս երեսի վրայ տարածուի.

քսկ միւսներն նաւին ներքնատունը խրկեցի։

Երբ կղզիին մօտեցանք աւազակներն հրացաններն առ մեզ ուղղեցին. «զգուշացիր» պոռացի, Փալմըրին, միևնոյն ժամանակը ես ալ ծռելով։ Սակայն, աւա՜ղ, Փալմըր վիրաւորեալ ինկաւ։ Նաւը ալիքներէն տակնու վրայ կըլլար, աւազակներն վրանիս գունտեր կտեղացնէին, վերջապէս կէս ժամէն ընդարձակ ծովն հասնելով կատարեալ ապահովութեան մէջ էինք։ Հօս ուրիշ թշնամի մը մեր դէմն ելաւ։ Փալմըրի ըսածին հաւատալով հաց չառինք հետերնիս, և հիմայ սարսափելի անօթութենէ կնեղուէինք։ Երկու օր այսպէս անցաւ, երրորդ օրը հովն ալ դադրեցաւ. նաւը անշարժ կեցած էր. արևին տաք ճառագայթներն մեր նեղութիւնը կրկնապատկէին։ Ջերմեռանդութեամբ անձրևի համար կաղօթէինք։ Չորրորդ օրը ընկերներնուս մին ծովու ջուր խմելուն պատճառաւ խելագարեցաւ։

Ճարտարապետին անզօր ձայնը զիս մահուան քունէն արթնցուց «հով ելաւ. հեռուէն առագաստներ կերևան որ դէպ ի մեզի են ուղղուած»: Նոր յուսով զօրացած ելլել ջանացի, սակայն զօրութիւնս կորուսած ըլլալով ինկայ և մարած մնացի։

Օտար նաւը մեզի հասաւ. նաւապետին զար-



մացաւ երբ մեր նաւը մտնելով մեզ այնքան նիհար գտաւ. միայն ճարտարապետը «բարի եկաք» մը կրցաւ արտասանել։ Մեզ իրենց նաւը առնելով մեծ խնամք տարին սակայն մէջերնուս մէկը մեռնելով Ովկիանոսին մէջ իր գերեզմանը գտաւ։ Իսկ մենք այս նաւով Վալբարայիզօ հասանք և անկէց նաւ մը մտնելով Անգլիա գացինք։

## ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ԾԽԱԽՈՏԻ.

Ծխախոտն Նիգօթին կոչուած խիստ ազդու թիւնաւոր նիւթէ մը կը բաղկանայ որու մէկ կաթիլը անգամ բաւական է մահ պատճառել։ Ասի գոց սենեակի մը մէջ գտնուած ամենն մարդուս շնչառութիւնն կը դժուարացնէ, և Մօրֆիումի նման անզգայութիւն և թուլութիւն կը պատճառէ։ Ունի նաև գրգռիչ յատկութիւն մը և ճիշտ ատոր համար համայն ազգաց սիրելի է եղած։ Սակայն պէտք է մարդկային կազմութիւնն նախ այս յատկութեանց վարժուի, ապա ծխել նոր սկսողը 'ի սկզբան սրտի խառնուիլ, փսխել, գլխացաւ, պտոյտ գլխոյ, 'ի մի բան ջղային ընդհանուր թուլութեան և թունաւորութեան ամէն նշաններն իր վրայ կ'զգայ և կը կրէ։

Վեց տարեկանէն վար տղայ մը (երբէք) ծը-
խախոտ գործածելու չէ եթէ չուզեր անդամալոյծ
լինել և իրեն կանուխ գերեզման պատրաստել:
Չափահասք երբ անկամակութեամբ կամ միշտ
թքնելով կը ծխեն պարտին բնութեան հետևիլ,
որ իր (դիմագրութեամբն) ցոյց կուտայ թէ
(այս) կազմութեանց ծխելն վնասակար է սա-
կայն վարժուելէ զկնի (չափաւոր) ծխելն նոցա
վնաս չպատճառեր. և եթէ մէկը նորա սովո-
րութէն յետոյ ձգել ուզէ զանի, փորի անդու-
թիւն և հոգեկան տկարութեամբ կը տուժէ իր
անձը: Նաև ընդհանրապէս մօտալուտ հիւան-
դութեանց նշաններէն մին ալ ծխելու ախոր-
ժակին կորսուիլն է.

Մուխն ու իր հետ ՚ի միասին կուլ տրուած
թուքն աղեաց ժրութիւն կ՚պատճառէ, և ջիղե-
րըն ու ողին ալ գրգռելով մտաւոր աշխատու-
թեանց աշխոյժութիւն կ՚տայ: Ուստի ծխելն ու-
սանողաց յատկացեալ առարկայ մ՚է համարուած:

Սակայն նոքա ալ պարտին զգուշանալ չափա-
զանց ծխելէ, զի գլխացաւ, ստամոքսի տկարու-
թիւն. թքախառն, ջղայ անզօրութիւն և նիհա-
րութիւն կրնայ պատճառել.

Մօտերս ծխելու վնասներուն վրայ եղած գա-
ղափարք ըստ բաւականին չափաւորեցան ծխա-
խոտին մուխին բաղադրութիւնն հետազօտու-



թեանց նիւթ ընելով:

Մուխին բաղադրութիւնն յայտնի է որ նախ-
ծխախոտին տեսակէն և երկրորդ ծխելու կերպէն
է կախեալ: Մինչև ցարդ կ՚կարծուէր թէ ծխա-
խոտին տերևն և մուխն երկուքն ալ թունաւոր
են, առանց նկատելու թէ ինչ է այն որ տե-
րևէն մուխի կ՚փոխուի, և թէ ո՛ր նիւթը ան-
փոփոխ կըմնայ և վերջապէս թէ այս չոր թոր-
մամբս մուխին մէջ ինչ նոր բան կ՚գոյանայ:

Ըստ Քէօգլերի հետազօտութեանց ծխափողին
կամ սիկարին վերի ծայրն մնացող մուխը ջրոյ
շոգին, ածուխ, ածուխի թթու, Ամոնեակ,
խէժային զանազան նիւթէ մը և Նիկոթինէ կ՚բաղ-
կանայ: Արդ խնդիրն հաւ է թէ որոնք այս
նիւթերն մարդուս բերնին կ՚հաղորդուին:

Վերոյիշեալ նիւթերէն և ոչ մին չոր ծխա-
փող մը կամ լաւ սիկար մը գործածուած ատեն
բերանը կ՚գան, մանաւանդ Նիկոթինն՝ բաղա-
ջին և նուազ ցնդող լինելով ծխախոտին այրած
ատենն ապխտեալ մուխի մը փոխուելով անմիջա-
պէս կ՚խառնուի և ատամներին (վերէն) ու ծխա-
փողին մէջ կ՚մնայ: Ջրոյ շոգին ածուխին հետ
միանալով կապոյտ գոյնով մը դուրս կ՚ելլէ: Ա-
մոնեակն և ածխոյ թթուն երկուքն ՚ի միասին և
կամ անջատեալ կ՚գտնուին ծխոյ մէջ: Նիկոթին
թոյն և քամբուրանման նիւթ մ՚ըլլալով

մուխին գործելի հոտ մը կ'առայ։ Վերջապէս խծա-մին դառն նիւթը ցնցող չըլլալով ծխախոտին մէջ կ'մնայ և միայն ծխախոտին թաց ու խոնաւ եղած տանը մինչև բերան կ'հասնի։ Այս նիւթերս ծխախոտին որպիսութենէն են կախեալ և ոմանց մէջ շատ խիկ ուրոց մէջ նուազ կ'գտնուին։

Սիկարը ծխափողէն աւելի նիւթերին մասնաւ բերանը կըհաղորդէ, մանաւանդ եթէ առանց բերանոցի (աղզլըք) սիկարին թաց ծայրէն ծխուելու ըլլայ։ Յայնժամ այս թոյնն ուղղակի թուքին հետ կ'խառնուի և գէշ ազդեցութիւն յառաջ կ'բերէ։

Ուստի իւրաքանչիւր ծխող թող հետևեալ կանոններուն լաւ միտ դնելով ծխելու օրինաւոր կերպն ուսանի և վնասակար հետևանքներու անկէ չնայ։

1. Ծխած տանդ յաճախ մի՛ թքներ. եթէ թուքդ առատանայ լաւ է ձգել ծխելն, զի թուքի կորուստն ստամոքսի տկարութիւն և մարսողական սխալ կ'պատճառէ։

2. Խիստ զօրաւոր ծխախոտ մի՛ գործածեր. քանզի նորա արհեստական միջոցներով ուժեղացուցած են։ Գիտցիր՝ որ օղին մէջ թրջած ծխախոտ կըգործածեն երբեք վնաս չեն կըներ։

3. Անօթի եղած տանդ չըլլայ որ ծխես.



ոչ ալ կերակուրէն և պառկելէն քիչ առաջ. քանզի ծխախոտն ստամոքսն կ'յոգնեցնէ և գոգախ յանկութեամբը քնոյ փախչելուն պատճառ կըլլայ։

4. Ծխած տանդ գլուխդ կախած մի՛ գործեր, նաև գրած և աշխատութեամբ տեղ մը նստած տանդ մի ծխեր. զի կծու ծուխն աչքերն կ'տկարացնէ։

5. Շատ ատեն քալած և հովի դէմ կամ դուրս 'ելեր եղած տանդ նաև բարձր ձայնով կարդացած և մարմնական աշխատութեանց պարապած միջոցին ծխելու չէս։

6. Ծխախոտը սիկարն ու ծխափողդ միշտ չոր ըլլալու է։

7. Որչափ որ կարելի է բերանոց (աղըզլըք) գործածէ։

8. Ծխափողն ու բերանոցն յաճախ Պէնզին կոչուած հեղուկով մաքրէ, որպէս զի թինաւոր նիւթէն բերանդ ազատ մնայ։

9. Թէ ծխափողին և թէ բերանոցը կարելի եղածին չափ երկար ընտրէ։

10. Իսկ եթէ այս ամէն զգուշութիւններն ընելէդ զկնի դարձեալ վնաս մը կամ անախորժ տհաճութիւն և դժկամակութիւն զգաս ըլլա յայնժամ բնութեան այս ազդարարութեան լաւ ականջ դիր, և ծխելոյդ բոլորովին վերջ մը տուր. քանզի քու կազմութիւնդ ծխելու անյարմար է։

Ով որ ըլլաս կանանց սեռին արժան եղած յարգանքն տուր։

---

Պատուհանդ մաքուր օդին միշտ բաց պահող դուռը բժիշկներուն համար գոց կպահէ։

---

Առանց խնայողութեան ոչ ոք կհարստանայ։

---

Նախապատիւ համարէ լռել քան խօսիլ։

---

Մինչև անգամ մտերիմ բարեկամաց ներկայութեանը առջեւ քաղաքավարութեան շրջանէն մ'անցնիր։

---

Մարմինէդ և հագուստէդ ամէն անմաքրութիւն հեռացուր։

---

Մարդուն ուղէղն ընդհանրապէս 3 և կէս լիբրա կկշռէ. կնկանը 2 լիբրա 11 ունկի։

---

Մարդուս սիրտն օրը 92,160 անգամ կզարնէ. մարդկային մարմինը 240 ոսկորներէ կբաղկանայ։

---

Գինիի բիծերն կտաւեղէնէ անհետացնելու համար եռացող կաթին մէջ թաթխէ լաթը։



Հաւկիթ պահելու համար պէտք է թարմ հաւկիթներ ունենալ։ Ջրոյ տակ իջնողը թարմ եւ երեսը մնացողը աւրուած է։—200 հաւկիթի համար ափ մը չմարած կիր առ և դոյլի (քովա) մէջ դնելով վրան ջուր լեցուր. խառնէ և հաւկիթները զգուշութեամբ մէջը դնելով բերանը գոցէ և պահէ։ Ջուրը քաշած ատեն վրան դարձեալ լից. կոտրածներն ալ միշտ հեռացուր որ միւսներն ալ չաւրուին։—Հաւկիթներն կիրի ջրով օծելով և չորցնելով ալ կրնան պահուիլ։

---

Քամֆոր (քեաֆիւր) կտոր մը պահարանիդ և հանդերձներուդ մէջ դիր և ցեցն հոն չմօտենար։

---

Լաւ է փոքրիկ գործ մը գլուխ հանել քան մեծ մեծ գործեր կիսկատար թողուլ։

---

Ոտքերն տաք պահելն գլխացաւն կարգիլէ։

---

Առնեկնոջ մէջ որքան քիչ կատակութիւն ըլլայ այնքան աւելի սէրն կաճի։

---

Սենեակդ օդափոխած ատեն վերի և վարի պատուհաններն բաց. մեկէն բարեկամդ—մաքուր օդն—ներս ընդունելու և միւսէն թշնամիդ—ապականեալ օդն—դուրս աքսորելու համար

Ուր որ ըլլաս կանանց սեռին արժան եղած յարգանքն տուր ։

---

Պատուհանը մաքուր օդին միշտ բաց պահող դուռը բժիշկներուն համար գոց կպահէ ։

---

Առանց խնայողութեան ոչ ոք կհարստանայ ։

---

Նախապատիւ համարէ լսել քան խօսիլ ։

---

Մինչեւ անգամ մտերիմ բարեկամացդ ներկայութեանը տուն քաղաքավարութեան շրջանէն մ՚անցնիր ։

---

Մարմնէդ եւ հագուստէդ ամեն տեսակ պղծութիւն հեռացուր ։

---

Մարդուն ուղեղն ընդհանրապէս 3 եւ կէս լիպրա կկշռէ կնկանը 2 լիպրա 11 ունկի ։

---

Մարդուս սիրտն օրը 92,160 անգամ կզարնէ. մարդկային մարմինը 240 ոսկորներէ կբաղկանայ ։

---

Գինիի բիծերն կտաւեղէնէ անհետացնելու համար եռացող կաթին մէջ բանէ լաթը ։



Հաւկիթ պահելու համար պէտք է թարմ հաւկիթներ ունենալ։ Ջրոյ տակ իջնալը թարմ իսկ երեսը մնացողը աւրուած է։—200 հաւկիթի համար ափ մը չմարած կիր առ եւ դոյլի (քովա) մէջ դնելով վրան ջուր լեցուր. խառնէ եւ հաւկիթները զգուշութեամբ մէջը դնելով բերանը գոցէ եւ պահէ ։ Ջուրը քաշած տեղն վրան դարձեալ լեց. չկոտրածներն ալ միշտ հեռացուր որ միւսներն ալ չաւրուին ։—Հաւկիթներն կիրի ջրով օծելով եւ չորցնելով ալ կրնան պահուիլ ։

---

Քամֆուր քեաֆիրի) բաւակ մը պահարանիդ եւ հանդերձներուդ մէջ դիր եւ ցեցն հոն չմօտենար

---

Լաւ է փոքրիկ գործ մը գլուխ հանել քան մեծ մեծ գործեր կիսկատար թողուլ ։

---

Ոտքերն տաք պահելը գլխացաւն կարգիլէ ։

---

Այր եւ կնոջ մէջ որքան քիչ կատակութիւն լինի այնքան առաւել սէրն կաճի ։

---

Սենեակդ օդափոխած տեղն վերի եւ վարի պատուհաններն բաց. մէկէն բարեկամդ—մաքուր օդն—ներս ընդունելու եւ միւսէն թշնամիդ—ապականեալ օդն—դուրս աքսորելու համար

միայն նոցա լաւ սպիտակութիւն մը կպարգևէ, այլ նաև բերնի որևէ գարշահոտութիւնն քաղցր հաճոյի կփոխէ ։

---

Մանկանց շարունակ խօսելու արտօնութիւն տալն սխալմունք է . ըսել չեմ ուզեր որ բնաւ խօսելու չեն , այլ սորվելու են թէ ե՞րբ խօսելու են։

---

Թոքերուն վիճակին առողջական լինելու համար կրցածիդ չափ շունչ քաշէ . յետոյ առանց այլևս շունչ առնելու բերնի ձայնիւ մէկ երկու համրել սկսէ . քաջառողջ Թոքերու տէր անձ մը 20—35 կրնայ համրել , իսկ տկարն 6—10 միայն ։

---

Ամերիկացի տիկին մը 35,353 կտորներէ բաղկացեալ վերմակ մը շինեց . ահա խնայողութիւն ։

**Թաւիշ (գատիֆէ) նորոգել .**

Ջուր ու լիքոր ամօնեաք կոչուած հեղուկէն հաւասար մասեր մեկտեղ խառնելով , կակուղ վրձինով մը Թաւիշին պառկած տեղերն զգուշութեամբ քսէ , և հանդերձը կ՚նորոգի ։

**Փայտէ կարասիները ներկել ։**

Հեղուկ կաւով մը գտնուած կարասիները շատ հեղ օծուած ատեն՝ տեղին գտնուած ծակերը Թափանցելով զանոնք կ՚ապանէ և կ՚ը-



Ածուխի կազէ շնչասպառ եղողին գլուխը պաղ ջուր լից , արիւն առ և ոտաց տակ մանանեխի թանձրաթան (հարտալ լափասը) դիր ։

---

Մանկանց ձեռքը որևէ սուր գործի գտնուած ատեն պարապ ձեռքն բռնելով միւս ձեռքին գեղեցիկ բան մը ներկայացուր և իսկոյն ձեռքըն բռնելով սուր գործին կԹողու .

---

Մարդիկ ստամոքսի ախտաւորութեանց դանդաղաներ կրտանան—զարմանալի չէ այս—քանի որ կերակուրն կուլ կտան առանց Թողելու որ ատամունք իրենց պաշտօնը կատարեն ։

---

Աղիքներու որդերն ջնջելու համար սխտորն քացախով և ջրով եփելով գործ ըրէ .

---

Վզի ցաւի համար պաղ ջրոյ մէջ Թաթախւած լաթ մը վիզդ փաթթելով վրայէն չոր լաթ մը կապէ օրը , քանի մ՚անգամ կրկնէ զայս.

---

Ամէն տեսակ անօթներէ և գործիքներէ որևէ գարշահոտութիւն լուալէն ջնջելու համար նոր ածուխի փոշիով և յետոյ աւազով շփէ ։

---

Սկաւառներն ածուխի փոշիով մաքրելն ալ Թէ-

փախչի, այս կերպով նաև մլուկներն (Թախտա պիթի) կրնան ջնջուիլ։

### Մուկերն ջնջացնել

Արդի չարաչար գործողութիւնք մուկերն զանգուրացնելու համար վերջապէս կանոյք քիչ մը ծերացած առեն բոլորովին կնոյն գլուխներուն վրայ պիտի ըլլայ։ Այս նպատակիս համնելու համար անվնաս և դիւրին միջոց մը կայ։ 16 դրամ Փօրաքս, 1 դրամ Արսենիքն 100 դրամ քիչ մը տաք ջուր լաւ մը խառնէ, և ամէնը լուծուելէն վերջը 3 գդալ թամբուրի ոգի հետը խառնելով այս ջրովս մուկերն թրջելու, և թղթի կտորներով փաթթելու է, Առտուն անդրամելէն եաև ամէնագեղեցիկ խաղալիքներ երևան կելնէն։

### Փոշուէ (Նուշէ) դեղ.

Քուցախի թթուն (ասիտ ասէդիք) այս վերքի դեղն կրնայ համարուիլ. առանց կարելու շաբաթ մը վերքը բամպակի կտորով մը աղտ և խիկան թրջէ, ու վերջը ինքնիրեն իյնալով ցաւն ալ կը դադրի։ Նեմանի կտոր մը վերքին վրայ կապելով ալ ցաւն կանցնի։

### Հազի դեղ

Պաղպաղ հազ կոչուած մանկանց տաքաւ-



մեկյի հիւանդութիւնը շատ անգամ սահմանեալ միջոցաւն անցած է։ Փոշի եղած ծծումբն խառնուածքի մը միջոցաւ հիւանդին կոկորդն պէտք է փչել, քիչ ժամանակէն հիւանդութիւնը կը նուաղի։

### Մրջիւններն ջնջելու հնարք։

Ա. մեծկակ սպունգ (սփունգեր) մը յէն գգուշութեամբ և ջրցնելէ յետոյ շաքարի ջուր վրան սրսկելով գետ մէկ կողմ. երբ մրջիւններն վրան ժողուին, պէտք է անմիջապէս սպունգը ջրոյ մէջ խոթել։

### Հազ դեղ

Եթէ մէջը փոքր գդալ մը Պերուվեանութ ալ առև 3 փոքր գդալ քուլէմ թարթար ջուրին մէջ լուծելով այնպէս ալ իւրն խմցնես. եփած առնելը տաքուկ և խմեր չէ։

### Մուկերն հեռացնել

Շանտալեզու (Զինօկլօսում օֆիճինալէ) կոչուած բոյսն մեկ եղած տեղն ցանէ։ Այս բոյսէն կենդանին այնքան կը զզուի որ մէկ օր չանցած կը փախչի։

### Ժանգոտած դանակներ, պատառներ, եւն մաքրել

Անոնք քիչ մը ժամանակ հեղուկ կուպի մէջ դնելէն ետքը խոզանով (մանթար) և կամ լաթ թով մը դիւրաւ կմաքրուին։

### Ոսկեջրութիւն

Մեծամ անուշադր (նիշադըր) ջրոյ մէջ լուծելով գրէ, և թուղթը չորցուր. եթէ գրածըդ կարդալ կ'ուզես թուղթը կրակի վրայ բռնէ: Կամ ջրով լուծուած պաղլեղով գրէ և կարդացած ատենդ թուղթը ջրոյ մէջ թրջէ:

### Գիր չոր մելանէ բիծեր ճերմակէ կտաւէ անհետացնել

Շնջրուկ (կիւհերջիլէ) ծծումբ, պաղլեղ և աղ (թէհրիպար) ամենէն ալ հաւասար չափով առ և լաւ մը փոշի ընելով իրար խառնէ, և լաթի կտորով մը բծին վրայ քսէ մինչև որ անհետանայ:

### Ժանգի բիծերը ճերմակէ կտաւէ անհետացնել

Բիծին վրայ աղեկ փոշի եղած կիր ցանէ, և վրան այնքան ժամանակ թող, մինչև որ բիծը հեռանայ:

### Աւրուած գիրերը վերանորոգել

Գխտորը (մազը) գինիի ոգիով (սփիրթօ) եփէ և կակուղ վրձինով մը գիրերուն վրայ քսելէդ վերջը չորցուր:

### Երկաթը ու պողպատը ժանգէ պահելու համար

Զուտ տրամ քամփուր (քեաֆիրի) 100 տրամ խոզի իւղի մէջ լուծէ, կրակի վրայ, գիր վրայի փրփուրը միշտ առնելով, յետոյ մէջը այնքան կապար խառնէ մինչև որ երկաթի գոյն առնայ:



Երկաթէ ու պողպատէ գործիքներն եթէ այս նիւթովս օծես, և 24 ժամ թողելէդ ետև լաթով մը սրբես, ամենևին ժանգէ ազատ կըմնան:

### Ապակին ուր հաւնաս կոտրել

Երկաթի կտոր մը կրակի պէս տաքցնելէդ ետև նշանին վրայ պտտցուր մինչև որ կտրուի:

### Ոսկեզօծ շրջանակները ճանճերու աղտէն մաքրել.

Վրձինով մը կամ սպունգով մը աղտոտուած շրջանակները քացախով օծէ, յետոյ ջրով լուա և մեղմ ջերմութեան մէջ թող որ ինքն իրմէն չորնայ:

### Ճաքած ամանները կցնել.

Չոր կաւիճը լաւ մը փոշի ըրէ և հետը բարակ կտրած բարդ խառնելով քիչ զօրաւոր գարեջրոյ միջոցաւ խիւսի ձև միացուր, և ամանին ճեղքուածներն մաքրելէդ յետոյ վրձինով մը մէջը քսէ: Կամ այլեւ, երկաթի խարտուք, և հաւկթի ճերմակն իրար խառնելով խմոր մը ըրէ և երկաթէ գործիքով մը մաքրուած ճեղքուածներուն մէջ լեցուր:

### Կոտրած ոսկր կցնել

Կաթսայի մը մէջ 48 տրամ աւշինայ 6 տրամ գեղին մեղրամոմ. 4 տրամ բեւեկնի իւղ,

Ջուրով ծեծած ձութ (տարր) հալեցնելով վրան կամաց կամաց երկու ափ մարմարինի փոշի աւելցուր վերջը գործածէ ։

## Ապակեղէն անօթներ կցելու

Հին պանիրն խիստ մանր կտրտելէդ վերջը, վրան քիչ մը չմարած կիր աւելցուր, ապա հաւկթի ճերմակուցը խառն մը կազմելէդ ետև գործածէ ։ Կամ չմարած կիրն փոշի ըրէ. և պանիր ու հաւկթի ճերմակին հետ խառնելով հաստ եղածին չափ շատ գործածէ ։

## Կոտրած ամանները կցելու

Հաւկթի ճերմակը զարնելէդ ետև մէջը չմարած կիր խառնէ, և կտորածները փակցնելու գործածէ ։

Լուտովիկ Բ. Հունգարիոյ Թագաւորն ժամանակէն առաջ ծնելով մորթն դեռ չէր կազմուած։ Երկու տարեկան եղած ատենը Թագաւոր օծուեցաւ. 14 տարեկան հասակին կատարեալ մօրուք ունէր. 15 տարեկան եղած ատենը ամուսնացաւ. 18ն մօտածին ալեւ մազերն ճերմկեցան և 20 տարեկան մեռաւ ։



Երեք փաճառականք օր մը մեծ անտառի մը մէջ ճամբան կորսնցնելով բաւական նեղութեան մէջ իյնկան ։ Հետևրնին քիչ մը ալիւրէն զատ ուրիշ բան մ'ալ չունէին, ասկից միայն մէկ կարկանդակ մը կրնար շինուիլ ։ Կրակը վառեցին, ալիւրը շաղուեցին և կարկանդակ մը ձեւացնելով կրակին վրայ դրին, ասկայն տեսան որ ասկից երեք հոգիի չելլար բաւականանալ ։

'Ասկից հոգին թէ երկու հոգիի կը բաւէ,, փախուցին մեր խորամանկութեան ծախողները ։ 'Աս գիշերին ինչպէս ընենք քնանանք, ըսաւ անհոգմէ մէկը։ 'Այսօր ձամբան եւ լաւ գիտեմ. դուն ինծի ձգէ բանը, ըսաւ միւսը ։

'Ընկերք, ըսաւ ասկից քիչ մը ատառելէն ետքը, 'ամէնքդ ալ կը տեսնէք որ կարկանդակը երեքնուս չի բաւեր բաւէ, ատոր համար առաջարկեմ որ ամէնքս ալ պառկինք մինչև որ կարկանդակն եփի, և մեզմէ ով որ ամենէն հրաշալի երազն տեսնէ ան միայն թող ուտէ զայն, 'Ոխտն ըսաւ, ըսաւ պարզամիտը մեր երկու խորամանկներուն ալ ։

Արդ ամէնքն ալ պառկեցան. երկու խորամանկները հոգնած, ծարաւած, քաղցած շատ մը քնացան. իսկ պարզամիտը արթուն կեցաւ ։ Եր-

բայց տեսաւ որ միւս երկուքը խորունկ քնոյ մէջ են ընկղմած, կամացուկ մը կրակին մօտեցաւ և տեսնալով որ կարկանդակը եփած է, առաւ և ամէնը առանձին եւս պահելու ։

Քիչ մ՚ անցնելով խորամանկներէն մէկը բարձր ձայնով կանչէր . Ա՜ . ի՜նչ պատուական երազ մը տեսայ . ինծի անանկ կու գար թէ, հրեշտակ մը զիս երկինքը Աստուծոյ առջին տարաւ . ի՞նչ փառաւոր տեղ էր ։ Ինծի բաւկինէց բոլորովին տարբեր է, ըսաւ միւսը . Երազիս մէջ տեսայ որ սատանան զիս դժոխքը տարաւ . որ հօրս զանազան տանջանքներն տեսայ, սոսկումէս դեռ կը դողամ ։

Ա՛յս ատեն երկուքին ալ անուշ զարմանալի երազներ են, ըսաւ առաջի խորամանկը, կարկանդակը մեր երկուքինն է . Է՜յ պարոն, պզտիկ պարզամիտն, ելիր և երազդ պատմէ, բայց կարկանդակէն մասն ու բաժին չունիս ։ Ո՞վ զիս կանչեց, ըսաւ անմեղ ելնելով և աչքերն շփելով . Մենք ճամբորդակիցներդ, պատասխանեցին միւսները . Ի՞նչ, դուք դարձեալ եկե՞ր էք, ըսաւ պարզամիտն . Երազիս մէջ տեսայ որ ձեզմէ մէկը երկինք է ելեր և միւսը դժոխքն է իջեր, ասոր համար կարծելով որ ալ ետ չի պիտի դառնաք, կարկանդակը կրակէն առնելով կերայ ։



Եպիսկոպոսի մը բարեպաշտ քահանաներէն մին փախճանելով իր բարեկամներէն մէկը խնդրեց հանգուցելոյն տեղը ընդունուիլ, որուն եպիսկոպոսը հաճութիւն ցուց ։

Օր մը եպիսկոպոսը կոչով մը տանձ ընդունեց և կը խորհէր թէ զանոնք ո՞ւր պահէ որ մարդու ձեռք չանցնի ։

—Սրբազան— ըսաւ Նորընծայ քահանայն —տանձերն իմ քովս ապահով կրնան ըլլալ ։—

—Կորիր անպիտան— ըսաւ եպիսկոպոսն —այդ եզը պարտիզպան ընել ըսել է ։ —Տէր ողորմեա՛— ըսաւ անդիէն ծերունի քահանայ մը —եզը չէք ուզեր պարտիզպան ընել, բայց գայլը հովիւ էք ըրած ։ —

---

Զաւիէն աւելի մեծափոր մարդ մը օրիորդի մը հետ կառքով կերթար ։ Սահմանագլխին մօտեցած ատեննին —մաքսի վերաբերեալ բան մը չունիս, այնպէս չէ՞ սիրուն օրիորդ — ըսաւ մարդը կարեկցական ձայնով մը — ատողի մաքսապետներն սատանայի որդիք են . անոր համար չըլլայ որ քովերնիդ բան մը գտնուի ։—Օրիորդը գոչելով ըսաւ — 30 կանգուն մետաքսեայ ժապաւէն գուլպայիս տակէն պրունքիս եմ փաթթած, արդեօք կրնայ իմացուիլ ։ — Ո՛չ, ամենևին — ըսաւ մեծափոր պարոնը ծիծաղելով ։

Կառքը կանգ առաւ․ մաքսապետները քըն-նութեան սկսան, մեծափորը աչքովը օրիորդն նոյա ցոյց տուաւ․ աղջիկը գունաթափ եղաւ և սկսաւ ուրանալ ։

—Ո՛․ ամօթ է, սիրուն օրիորդ—ըսաւ հաստ մարդը,—սուտ մի ըսէք, ձեր բերնովը խոստովանեցաք ինձ որ սրունքիդ վրայ 30 կանգուն մետաքսեայ ժապաւէն կապեր էք ։— Օրիորդն պարտաւորեցաւ կառքէն իջնալ, մաքս և տուգանք վճարելէն ետև երկուքը կառքը հեծան և ճամբան շարունակեցին, սակայն օրիորդը այսպիսի վատ մատնութեան մը վրայ զայրացած կուլար ։

—Սիրուն օրիորդ —ըսաւ մեծափորը —մի բարկանաք ըրածիս համար․ պէտք էր զձեզ մատնէի որպէս զի ես ազատէի․ զի այս մեծ փորիս պատճառը վրան փաթթած 3000 կանգուն մետաքսեայ ժապաւէնն է․ ձեր կորուսած 30 կանգունին տեղը 40 կանգուն և տուգանքն ալ ինձմէ պիտի առնաք ։ —

— —

— Գնա դրացիին— ըսաւ պարոն մը ծառային — և ըսէ որ թող գիրքը ինծի փոխ տայ—

Ծառան գնաց, դրացիին ուզելու համար ։

— Գնա տիրոջդ ըսէ որ ես սովորութիւն



չունիմ սենեակէս դուրս գիրք հանել, թող հոս գայ ու ուզածին չափ կարդայ ։—

Ժամանակ կանցնի և դրացին օր մը տղան վերոյիշեալ պարոնին խրկելով կը խնդրէ որ փուքը (քէօրիւկ) տայ ։— Գնա հօրդ ըսէ —կըպատասխանէ պարոնը— որ ես սովորութիւն չունիմ փուքս սենեակէս դուրս հանել, թող հոս գայ և ուզածին չափ փչէ ։—

— —

Ֆրանքօ—Գերմանական պատերազմին ատենը Գերմանացի վերաբոյժ մը Գաղղիացի գեղարան մ'երթալով կուզեր տզրուկ (սիւլիւկ) գնել ։ Վերաբոյժն ըստ որում տզրուկին Գաղղիերէնը չէր գիտէր —տէր իմ— ըսաւ —կը խնդրեմ որ ինձ արիւն ծծող փոքր սև կենդանիներէն քանի մը հատ տալ հաճիք ։ —

— Ա՛․ հասկցայ —ըսաւ դեղավաճառը, —լու է ուզածնիդ որ հոս չի գտնուիր ։ —

— —

Մարդուն մէկը փողոցը շան մը զարկած միջոցին անցնողներն զինքն հայհոյելով կը նախատեն ։ Զայս տեսնելով մարդը շանը կը դառնայ և կըսէ— կը ներէք ինձ․ չէի գիտեր որ դուք զձեզ պաշտպանող ազգականներ ունիք եղեր ։—

Ջրաբոյժ մը օր մը հիւանդի մը պատահելով կը խոստանայ զանի 6 ժամուն միջոցին կատարելապէս բուժել։ Հիւանդն համաձայնութիւն կուտայ և սենեակ մը մտնելով ջրաբոյժն գործողութեան կը ձեռնարկէ։ Նախ կը հրամայէ հիւանդին մերկանալ։ Հիւանդն նորա առջին կը կանգնի ինչպէս Ադամ 'ի Դրախտն։ Բժիշկն մեծ կտաւ մը պաղ ջրոյ մէջ թրջելով լաւ մը մէջը կը փաթթէ զհիւանդն. յետոյ երկրորդ կտաւ մ'ալ առանց թրջելու վրայէն կփաթթէ և վերջը բրդեղէն սաւանի մը մէջ լաւ մը կապելով անկողինը կը դնէ զանի։

— Է՛ ինչպէս ես, տաքութիւն կզգա՞ս— կը հարցնէ բժիշկը։

— Քրտինքիս մէջ կեռամ — կը պատասխանէ կապեալ և կաշկանդեալ մարդը։

— Լաւ նշան է, հիմայ կրցածիդ չափ բերանդ բաց որ հիւանդութեան նիւթերն դուրս հանեմ։ — կը հրամայէ բժիշկը։

Հազիւ թէ պարզամիտ մարդը բժշկին հրամանին հետեւելով բերանը կը բանայ, բժիշկը գաշկինակով նորա բերանը լաւ մը կը խցէ և վրայէն ալ հաստատ կերպով կը կապէ։ Յետոյ սենեակին մէջ գտնուած թանկագին բաներն, դրամն և դրպանը գտնուած արժեթուղթերն առնելով խոնարհութեամբ —Մնաք բար-



եաւ— ուրիշ անգամ բժիշկի կարօտ եղած ատենիդ պատրաստ եմ ձեզի ծառայել— ըսելով կը հեռանայ։

Անցեալ տարուան պատերազմին երկու Գերմանացի զօրք 30 կառ—Մօզէլ կոչեալ Գաղղիացիներու ձեռք ինկան, որոնք գերութեան երթալ կհրաւիրէին զանոնք։

—Եթէ մենք ձեր հետ երթանք —կըսէին Գերմանացիներն — գոնէ ձեզի չափ թշուառ պիտի ըլլանք. իսկ եթէ դուք մեր հետը գալու ըլլիք ոչ թէ միայն մեր զօրաց պէս երջանիկ պիտի ըլլաք, այլ պատերազմի նեղութիւններէն բոլորովին պիտի ազատիք։ —

Զայս լսելով համոզեցին զԳաղղիացիս և զանոնք այծի հօտի նման քշելով իրենց բանակը գերի տարին։

Մէքլէնպուրկի դուքսը զայս լսելով այնքան հաճութիւն զգաց որ այն երկու Բրուսիացւոց մեծ պարգեւներ տուաւ։

---

Մարդկային կենաց միջին տեւողութիւնը 33 տարի 6 ամիս է. մարդկանց մէկ չորրորդն 7 տարեկան ըլլալէն առաջ կը մեռնին. 100 էն 6ը 60 տարեկան կըլլան, 300 էն մէկը 80 և

1000 էն մէկը 100 :

Ամէն տարի 33 միլիոն մարդ կը մեռնի, օրը 96,000, ժամը 3700, րոպէն 6 և մանկրերրոպը մէկ :

Տարին 42 և կէս միլիոն մարդ կը ծնին հետեւապէս 9 և կէս միլիոն աւելի են ծնեալք քան մեռեալք. սակայն աշխարհիս հաւասարակշռութիւնը պատերազմանց և բնական պատահարաց միջոցով միշտ նոյն կը մնայ :

Ծնունդ և մահ աւելի գիշերն կը պատահի քան ցերեկը :

Երկու սեռէն 120 հոգիէն մէկը միայն կամուսնանայ :

Ամեն տարի աշխարհիս վրայ 82 և կէս միլիոն ամուսնութիւն կը կատարուի :

---

## ԽՈԼԵՐԱՅԷ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խոլերայի թեթև թէ ծանր նշանները տեսնուածին պէս բժշկական օգնութիւնն հարկաւոր է :

2. Որովայնի անկարգութիւնք անմիջապէս շտկել ջանալ հարկ է :

3. Կենդանական և բուսական ամեն տեսակ անմաքրութիւն հեռացուր տանդ շրջանէն :

4. Ամէն սենեակ կէս օրուան մօտ օդափոխէ :



5. Տունդ ջրով մաքրելուն վերջ տուր :

6. Ջափէն աւելի մի հոգնիր, մարմինդ խոնաւութեան կամ պաղի մ'ենթարկեր մանաւանդ գիշերն :

7. Պաղ ըմպելիք և թթու հեղուկներ մի գործածեր մանաւանդ ջերմ եղած ատենդ :

8. Պաղ և թթու պտուղներ և բոյսերմուտեր :

9. Ոգելից ըմպելիք և չափազանց ծխելը վերջացուր :

10. Մէջքդ բրդեղէն գօտի մը կապէ :

11. Անձնական մաքրութեան ուշադիր լեր :

12. Բազմամարդ տան մէջ մի բնակիր :

13. Ցած և խոնաւ սենեակներ մի պառկիր :

14. Գիշերն պատրաստ կրակ ունեցիր, զի քոլերան սովորաբար գիշերն պատահի,

15. Անկողնոյվերարկուներդ կտաւներդ ձմեռն կրակին, ամառն արեւին տաքութեամբ չորցուր :

16. Սննդարար կերակուր կեր, կերակուրդ մաքուր ջրով եփէ :

17. Թաց հանդերձներ մի հագնիր :

18. Բաւական եղածէն պակաս կամ աւելի հանդերձ հագնելով մարմինդ մի պաղեցներ կամ տաքցներ :

19. Հեռացիր բարոյական և բնական դրդումներ պատճառող ընկերակցութենէ :

20. Մեռելն անմիջապէս բնակարանէդ շրջանէն հեռացուր :

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Անգամ մը շնչուած օդը թթուածինին գլխաւոր մասն կը կորսնցնէ իսկ ածխածինն կը շատնայ. ուստի առողջութիւնը կը պահանջէ որ միեւնոյն օդն միայն անգամ մը շնչենք:

2. Մարմնոյն հաստատուն մասն միշտ ըսպառելու վրայ է. սպառելոյն տեղ դարձեալ լեցնել հարկ է. ուստի ըստ քանակութեան ըսպառելոյն պարտինք կերակուր ուտել:

3. Նաեւ մարմնոյ միակ հեղուկ մասն —ջուրը— միշտ սպառելու վրայ է. ուստի ջուրն է մարդուս հարկաւոր եղածն եւ անկէ լաւագոյն հեղուկ մը արուեստական կերպով չէ հնար պատրաստել:

4. Մարմնոյն մէկ իններորդը հեղուկ եւ 8 իններորդը հաստատուն մասերէ կը բաղկանայ. ուստի կերակուրն եւ ըմպելիքն ալ սոյն համեմատութեամբ պարտի լինիլ:

5. Լոյսը կենդանեաց եւ բուսոց աճմանը վրայ մեծ ազդեցութիւն ունի. ուստի բնակարանք մարդկանց արեգական ճառագայթաց համար բաց լինելու են,

6. Կենդանական եւ բուսական փթթածներէն առարկայ թունաւոր կազ կարձակեն որք շնչառութեամբ թոքերուն հաղորդուելով արիւնըն կապականեն. ուստի ամեն տեսակ անմաքրութիւն հեռացնելով մաքուր օդի մէջ ապրիլ հարկ է:

7. Ջերմութիւնն մարմնական գործողութեանց հարկաւոր է. ուստի մարմնոյ բարեխառնութիւնը պարտինք հանդերձներու, կրակի եւ շարժմանց միջոցով հաւասարակշռութեան մէջ պահել.

8. Երկարատեւ աշխատութիւնք ջղաց տըկարութիւն կը պատճառեն. ուստի թէ ուսմունք եւ թէ աշխատանք կարճատեւ լինելու են:

9. Ջերմութեան եւ ցրտութեան յանկարծական փոփոխութիւնը վնասակար է. մանաւանդ մանկանց եւ ծերոց համար. ուստի եղանակաց, ցերեկուան եւ գիշերուան համեմատ հանդերձք փոխելու է. եւ ուստի մարմինն տաք եղած ատեն պաղ ըմպելիք եւ պաղ եղած ատեն տաք խմելիք առնելն բազում չարեաց աղբիւր կը լինի:

10. Ուտելեաց եւ ըմպելեաց չափաւորութիւն, համառօտ ուսմունք եւ աշխատութիւնք, կանոնաւոր շարժում եւ հանգստութիւն, մաքրութիւն, հաւասարակշռութիւն բարեխառնութեան եւ կրից. ասոնք են մարմինն եւ ոգին առողջ պահողներն եւ այս՝ ամենայն հարստութիւն կը գերազանցէ:

## ԱՆՎԵՀԵՐ ՔԱՋՈՒԹԻՒՆ

Գիշեր էր ։ Խոր մթութիւն մը կը պատէր ծովը ։ Շոգենաւ մը ալեաց կոհակներն ճեղքելով յառաջ կ'ընթանար. ճամբորդներն ուրախ զուարթ միմեանց հետ կը խօսակցէին ։

Նաւը հանդարտ իր ճամբան կը շարունակէր ։

Յանկարծ ղեկավարին ձայնը լսուեցաւ «Պարոն նաւապետ ինձ կը թուի թէ հրոյ հոտ կ'առնեմ, սակայն չեմ գիտեր թէ ուսկից կուգայ» Նաւապետն շունչը քաշելով ինքն ալ թէեւ նոյն հոտը կ'առնուր սակայն իրեն այնպէս կը թուէր թէ երբեմն իրօք այրող բանի մը հոտ կար, եւ երբեմն ալ բոլորովին կ'անհետանար ։ Չորս կողմը կը քննեն, բայց ՚ի զուր ։

Հրդեհն երթալով կ'աճէր, այլ անոնք չէին գիտեր ։ Վերջապէս կէս գիշերին, յորժամ կրակը շոգենաւին չորս կողմը տարածուած էր, նաւապետը կրակին բոցերն տեսնելով սկսաւ գոչել, «Մաքսվի՛լ (ղեկավարը) աւասիկ բոցը անիւներուն քովէն երեւիլ կ'սկսի» ։

«Ուրեմն նաւը դէպ ՚ի ցամաքն ուղղեմ» պոռաց ղեկավարը, ձեռքերն գլխուն զարնելով, զի նաւին որպիսի ահուելի վտանգի մէջ լինելն լաւ կը ճանաչէր, սակայն ինքզինքն բնաւ չկորսնցուց, եւ երբ տեսաւ որ զինքը առանձին



թողած էին ծունր դրած առ Աստուած կ'աղօթէր, «Ամենակարող Աստուած, զօրութիւն պարգեւէ ինձ այժմ, որ հաւատարմութեամբ իմ պարտքս կատարել ջանամ, դու լեր իմ կնոջս մխիթարիչն, եւ ութն զաւակացս հայրը» ։

Ղեկն ՚ի ձեռին, աչքերն ամենամօտ ծովեզերքն էր ուղղած, նաւը նետի պէս յառաջ կ'ընթանար ։

Նաւաստիք ամենայն ջանիւք հրդեհն մարել կը ջանային, սակայն կրակին կատաղութիւնը երթալով կը զօրանար իսկ նաւն կայծակի պէս ալեաց մէջէն կը սլանար ։ Ճանապարհորդք նաւուն գլուխը խռնած էին, զի այնկողմէն զօրեղ հովերուն հոսանքը ծուխն նաւուն ետեւի կողմը կը քշէր, խեղճ Մաքսվիլ հոն մուխին մէջ ղեկն ի ձեռին կանգնած էր, իբր մարտիրոս փայտակոյտին վրայ ։ Թէեւ նաւապետն ու նաւաստիք ղեկին կողմը ջուր հասցունելու համար բոլոր ճիգերնին կը թափէին այլ հագեհին կատաղեալ բոցերն զսպել չկարողացան. Մաքսվիլի կայնած տեղն արդէն բռնկիլ սկսած էր, սակայն քաջ ղեկավարն իր դիրքը չէր փոխեր, զի կզգար թէ 80 հոգւոյ ազատութիւնն իրմէ կախեալ էր, ձեռքն ղեկին վրայ դրած աչքերն շարունակ ցամաքին ուղղած անշարժ կը կենար ։ Կրակը արագութեամբ նաւը յառաջ կտանէր ։

Ցամաքէն՝ այլուր նաւը նշմարելով նշան կռակին դժբաղդներուն ցոյց տալու համար թէ ո՞ր կողմը պարտին նաւը ուղղել ։ Մաքովիլ նշանը կհասկընար, թէպէտեւ աչքերն այրիլ կսկսէին բայց դեռ ղեկն չէր թողուլ ։ Նաւը փայլակի մէջ արագութեամբ յառաջ կընթանար և տակաւին գոհ ըլլալով կուզէր նորա թեւեր տալ աւելի շուտ հոն հասնելու համար, քանզի կզգար թէ նաւը անշուշտ պիտի ընկղմէր ։ Վերջին անգամ՝ ալ դարձնելով նաւը աւազին վրայ խրեցաւ, ամենքն ալ կազատին, նաեւ քաջ ղեկավարն ալ ցամաքը կը հասնի, բայց ինչ կերպարանքով, հանդերձներն փոշու նման գետինը կթափէին, աչքերը բոլորովին այրած էին, և թէև բոլոր կենացը մէջ խեղանդամ մնաց սակայն իրենց կեանքը նորա պարտական եղան ճանապարհորդք բաժանորդագրութիւն մը բանալով օգնեցին որ իր ընտանիքը խնամէ ։



## ՀԱՆԵԼՈՒԿՔ

Լայնածաւալ լճի մ՚ վրայ
Անդամանդեայ կամուրջ մը կայ.
Հսկայական կայմերն նաւին,
Իր կամարին տակէն կանցնին ։
Նորա դռներն չեն տեսնուած,
Դեռ վրայէն մարդ չէ անցած.
Անձրեւք երկիրն երբ ողողեն,
Աչքերդ կամուրջն կանգնած տեսնեն,
Իսկ երբ երկիրն ցամքի, չորնայ,
Կամուրջն իսկոյն անհետանայ ։

—

Երկրիս վրայ ինծի նման,
Վիշապ եղած չէ երբեան.
Արագութիւնս է ահաւելի,
Կատաղութիւնս սարսափելի.
Ահեղ սուլմամբ չորս կողմ վազեմ,
Մինչ որս գտնեմ զայն հարուածեմ.
Մէկ հարուածով ձին ու հեծեալն,
Կը թաւալին անշունչ, մեռեալ.
Հզօր ծառերն յարդի նման
Մէկ հարուածովս փշրած կիյնան.
Ջերմութեանըս չեն դիմանար,
Պղինձ, երկաթ և փայտ և քար.
Ես յարձակմանցըս նպատակ
Բարձր ծայրերն են շարունակ ։

Առանց գլխի․ ձեռքի, ոտքի
Հեռու տեղեր կը պտտի․
Ցամաք երկրէն, կամուրջներէն,
Խոր, ընդարձակ ծովուն մէջէն,
Լուրեր տանի արագընթաց․
Հնազանդելով մարդու կամաց,
Նաև տեղը բնաւ չփոխեր,
Մինչ չտափուին աւազակներ։

—

Նուաստորդիդ եմ միշտ շրջող․
Յայս և յայն կոյս շրջագայող․
Ոչ առագաստ ունիմ, ոչ կայմ,
Սակայն հեռու տեղեր երթամ․
Ազնիւ և զուտ պարգևէն ծովու
Վեր կը հանեմ երկրէս հեռու․
Կուզէ՞ք երկիրն գանձերս վայլել․
Ո՛հ․ պէտք է նաւս լաւ խորտակել։

—

Չորս եղբայրներ երկրիս վրան,
Իրարու հետ ընկերացան․
Մին կընթանայ—բայց չհոգնիր․
Երկրորդն կուտէ — բայց կուշտ չըլլար․
Երրորդն խմէ — ծարաւն չանցնիր․
Չորրորդն կերգէ — մարդ չհաճիր։

———



—Ուսումն՝ ոմանց վեհ՝ սուրբ՝ տէր համայնի՝ Աստուած է նա․

Ոմանց ալ փափուկ կովիկ մ'է որ միշտ իր կաթը կուտայ։

—Ամէն մէկ անձի հետ զատ զատ խօսէ, Պղատոն է գիտուն․

Բայց ժողվէ մէկտեղ գլուխներն կարծես յարդով է լեցուն։

—Եթէ փոքր անկարգութեան մը տեղի տաս անտարակոյս եղիր որ մեծ մ'ալ նորա պիտի յաջորդէ։

—Գիտութիւնը մարդս խոնարհ կընէ, տգիտութիւնը՝ հպարտ։ Գիտութիւնը մեղմ ձայնիւ խօսի տգիտութիւնը՝ բարձրաձայն։

—Ազգային յառաջադիմութեանց համար եղած մինչև անգամ ամենափոքր ձեռնարկութեանց ոչթէ միայն յուսահատութեան պատճառ տալով նոցա խափանմանը գործիք մի լինիր․ այլ քաջալերութիւն տալով ջանայ որ նոքա այլ և յառաջանան։

Ուստի եթէ Օրացոյցս այս փորձառութիւնն ընելու երջանկութիւն վայելէ, գալ տարի այլև օգտակարագոյն նիւթեր մատակարարել կխոստանայ Ազգին։

———

# ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԻ

| Օ | Ծ. Ա | Կ. Օ | Ե. Օ |
|---|---|---|---|
| | Ժ. Ր. | Ժ. Ր. | Ժ. Ր. |
| **ՅՈՒՆՎԱՐ** | | | |
| 1 | 2.42 | 7.21 | 9.18 |
| 15 | 2.22 | 7.11 | 9.13 |
| 25 | 1.56 | 6.58 | 10. 4 |
| **ՓԵՏՐՎԱՐ** | | | |
| 1 | 1.57 | 6.49 | 10.22 |
| 15 | 1. 9 | 6.54 | 10.51 |
| 25 | 12.54 | 6.17 | 11.26 |
| **ՄԱՐՏ** | | | |
| 1 | 12.22 | 6.11 | 11.38 |
| 15 | 11.51 | 5.56 | 12. 9 |
| 25 | 11.19 | 5.59 | 12.41 |
| **ԱՊՐԻԼ** | | | |
| 1 | 11.00 | 5.30 | 13.00 |
| 15 | 10.28 | 5.14 | 13.51 |
| 25 | 9.58 | 4.59 | 14. 2 |
| **ՄԱՅԻՍ** | | | |
| 1 | 9.46 | 4.55 | 14.14 |
| 15 | 9.25 | 4.43 | 14.55 |
| 25 | 9.11 | 4.56 | 14.49 |
| **ՅՈՒՆԻՍ** | | | |
| 1 | 9. 6 | 4 55 | 14.54 |
| 15 | 9. 5 | 4.51 | 14.57 |
| 25 | 9. 9 | 4.55 | 14.51 |

| Օ | Ծ. Ա | Կ. Օ | Ե. Օ |
|---|---|---|---|
| | Ժ. Ր. | Ժ. Ր. | Ժ. Ր. |
| **ՅՈՒԼԻՍ** | | | |
| 1 | 9.15 | 4.57 | 14.45 |
| 15 | 9.31 | 4.45 | 14.29 |
| 25 | 9.56 | 4.57 | 14. 4 |
| **ՕԳՕՍՏՈՍ** | | | |
| 1 | 10.12 | 5. 6 | 13.48 |
| 15 | 10.38 | 5.19 | 13.22 |
| 25 | 11.12 | 5.36 | 12.48 |
| **ՍԵՊՏԵՄԲԵՐ** | | | |
| 1 | 11.33 | 5.46 | 12.27 |
| 15 | 12.57 | 6. 4 | 11.53 |
| 25 | 12.59 | 6.18 | 11.21 |
| **ՀՈԿՏԵՄԲԵՐ** | | | |
| 1 | 12.55 | 6.27 | 11. 5 |
| 15 | 1.51 | 6.46 | 10.29 |
| 25 | 1.56 | 6.58 | 10. 4 |
| **ՆՈՅԵՄԲԵՐ** | | | |
| 1 | 2.12 | 7. 6 | 9.48 |
| 15 | 2.56 | 7.18 | 9.24 |
| 25 | 2.50 | 7.25 | 9.10 |
| **ԴԵԿՏԵՄԲԵՐ** | | | |
| 1 | 2.34 | 7.27 | 9. 6 |
| 15 | 2.57 | 7.28 | 9. 5 |
| 25 | 2.51 | 7.25 | 9. 9 |

Քաղաքացի և գիւղացի,
Հայաստանցի և Պոլսեցի,
Երիտասարդք, փոքրիկ աղայք,
Օրիորդք, որք նաև կանայք,
Հարուստք, աղքատք և գործաւորք,
Դպրոցականք, արհեստաւորք,
Օրացոյցէս'թէ հատ մ' առնեն,
Իրենց յարմար նիւթեր ունենան ։

6736

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0032162